ՆՈՐ-ԴԱՐ

№ 97 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 13 Յունիսի 1885 Հինգշաբթի 13 Յունիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 97

Տարեկան 10 ռուբլ. վեց ամիսը՝ 6 ռուբլ. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հատը 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գինն 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում յունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են—6 ր. 50 կ.

Հասցէների փոփոխութեան համար վճարում են եօթը հատ եօթը կոպէկանոց մարկա։

Թերթը ամարանոցում ստացող բաժանորդները վճարում են 80 կոպ.

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատանը, քաղաքի կենդրոնում, պօստատան ետեւը Տրոյցկի փողոցում Սամեբա եկեղեցու հանդէպ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկօ.—Լուրեր։ Տէր Նմաւոնեանի և միւսների գործը։
Թղթակցութիւններ.—Բագու։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
„Նոր-Դար“-ի պատասխաններ։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Մահմեդի կեանքը։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Այստեղ եկել էին Թիւրքահայաստանի Մուշ գաւառից շատ խղճալի վիճակում։ Խեղճերը շատ էին գանգատվում հարկերի ծանրութիւնից։ Ասում էին, որ կառավարութիւնը ամեն մի հոգուց 3 ր. 50 կ. է առնում։ Դրանք այստեղ պարապմունք չը գտնելով վերադարձան հայրենիք։

Ասում են, որ անդրկովկասեան հայ կաթոլիկ համայնքը մտադիր է կառավարութեան խնդրամատոյց լինել, որպէս զի այսուհետև ստորադրուէ Արդուինի եպիսկոպոսին, դուրս գալով Սարաթովի եպիսկոպոսի իրաւասութիւնից։

Այդպիսով Արդուինի վիճակին կենթարկուին Ախալցխայի, Լոռու, Ախալքալաքի, Ալէքսանդրապօլի, Դարսի Արդահանի, Արդանուշի և Բաթումի յաջորդութիւնները։ Վիճակը կունենայ 9 յաջորդութիւն երեսուն երեք հազար ժողովրդով։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ.—Ամսոյս 4-ին առաւօտեան ժամը 8-ին Շարավանդ գիւղի տէրտէրը և գիւղացիներից մէկը Ղազար անունով ուղևորւում են գիւղից Կաղզուան, 3 ժամից յետոյ յանկարծ տէրտէրի ձին արիւնով ներկուած փախչում է գիւղ։ Այս մասին յայտնում են տեղւոյս գաւառապետին, երկու օր շարունակ որոնելուց յետոյ վերջապէս գտնում են սպանուածների հալաւները, տէրտէրի գաւազանը և մօտակայ քարերը արիւնով ներկուած։

Սպանիչները անյայտ են, միայն կարծիք է տարվում Շարիֆ քրդերի տանուտէրի վերայ, որ նա սպանել տուած լինի, որովհետև տէրտէրի եղբայր Քօչարը սրանից մի ամիս առաջ սահմանից բերում է մաքսատուն 100 հատ եզներ և գոմէշներ և ծախվում է յօգուտ մաքսատան այս անասունները։ Եղել են Շարիֆ քրդերի եղբոր անասունները և հենց այս թշնամութեան համար սպանել տուել։ Սպանուածների մարմինները դեռ գտնուած չեն։

Միւս օրը կաղզուանցիք բաղերը ջրելու համար կռւում են և երկաթէ բահով խփում են մի Քեալալ անունով մարդի գլխին և գլուխը բաւականաչափ ճեղքում է։ Քեալալը մի ժամաչափ մեռած է մնում. խփող տղան բանտարկուած է, իսկ վիրաւորուածը մերձ ի մահ հիւանդ է։

—

Միենոյն անցքի մասին գրում են մեզ նոյն տեղից.—Ամսոյս հնգին ցերեկով Ղարաղալայ գիւղից երկու վերստ հեռաւորութեան վերայ չարագործները սպանում են Ղարավանք գիւղի քահանային մի մարդու հետ (Ղազար անունով). քահանայի ձին փախչելով ազատվում է աւազակների ձեռքից, իսկ միւսինը տանում են։ Սպանուածների դիակները անյայտացած են, միայն սպանութեան տեղը գտել են նրանց գլխարկները արիւնոտ և քահանայի գաւազանը։ Մարդասպանները չը կան. զարմանալի բան է, որ ոճրագործութիւնը պատահում է Բաշմուխթար, քիւրդ Շարիֆ աղայի գիւղի մօտ ցերեկով, իսկ նա այդ անցքից ոչինչ տեղեկութիւն չունի, երևի սպանուածները հայեր էին. այդ պատճառաւ պատուելի քիւրդը չէր բարեհաճել նեղութիւն կրել և տեղեկանալ, մինչդեռ ուրիշ անգամներ պատահել է, որ եթէ իւրայիններից մի հաւ անգամ գողացուած է եղել, իսկոյն և եթ գտել է գողը և կառավարութեանը յայտնել։

Սրանից մի քանի օր առաջ անտառի Ճանապարհին աւազակները կաղզուանցիների 36 էշերը տարան, բայց բարեբախտաբար սպանութիւն չը պատահեց։ Աւազակներից մէկը կալանաւորուեցաւ, իսկ էշերը դեռ մինչև այսօր չեն գտնուած։

—

Նոր օրէնքը, որով պիտի արգելուի թէ պետական և թէ մասնաւոր տոկոսաբեր թղթերի ժամանակը չը լրացած կտրոնների (կուպոն) գործածութիւնը, ֆինանսների մինիստրութեան առաջարկութեան համաձայն, կը ըսկսել գործ դրուել, նպաստելու նպատակով այն անձանց շահերին, որոնց արժէթղթերի կտրոնները կտրուած են, և որոնց կտրոնների ժամանակը չէ լրացած, միայն 1887 թ. յունվարի 1-ից։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Գաւառիս մէջ ձէզպանի Թիւրքաբնակ գիւղում այս օրերս յայտնուել է Շէյխ-Աբդուլլահ անունով մի անձն։ Շէյխը իրեն համարում է մարգարէների օրինաւոր յաջորդ որ հասնում է մինչև Նազրէ-Օմարին։ Նա բաղդադեցի է, և այնտեղ իսլամ խալիֆաների մօտ սովորել է Կորանը և հասել է մինչև Շէյխի աստիճանին։ Գաւառիս Սիւնի մուսուլմանները նրան սուրբի տեղ են ընդունում։ Նա շրջում է ամեն գիւղ։ Ամեն մի ճշմարիտ մուսուլման ուրախութեամբ դիմում է շէյխի ոտքը որ ստանայ «ինաւայ» ասուած օրհնութիւնը։ Ինաւայ ստանալու համար ասում են որ տալիս են 15 ր. մինչև 50 ր. փող։ Շէյխը բնութեամբ հանդարտ և խաղաղութիւն սիրող է։ Նա շատ քիչ է խօսում և միշտ աղօթում է։ Շէյխի ետևից հետևում են ահագին բազմութիւն։ Շատ տեղեր գիւղերի մէջ ոչխարներ են զոհում շէյխի պատուին։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ.—Յունիսի 5-ից „Моск. Вѣд.» լրագրին հեռագրում են, Տփղիսի երկաթուղու Ճիւղը, Կովկասեան լեռնաշղթայի միջով երկաթուղու հաղորդակցութիւն ունենալու անհրաժեշտութեան պատճառով, ծրագրվում է շարունակել մինչև Մամիսոնի անցքը և այնտեղից Արդոն գետի վերայով մինչև Ռոստով—Վլադիկավկազեան գիծը և այդպիսով Անդրկովկասը կապել հիւսիսային Կովկասի հետ։

—

ԴԱՐՍԻՑ.—Այստեղի Հայ-կաթ. եկեղ. երեցփոխը մինչև այժմ հակառակ ժողովրդի քանիցս յայտնած ցանկութեան, հաշիւ չէ տալիս և անյայտ են մնում այդպիսով եկեղեցու եկամուտների, արդիւնքի հաշիւները, և թէ ինչ բանի են ծախսվում կամ ուր են գտնվում եկեղեցապատկան գումարները։ Գեր. Հ. Զաքարեանի ուշադրութիւնը հրաւիրում ենք այս հանգամանքի վերայ։

—

ԴԱՐՍԻՑ.—Անձրևներ անընդհատ գալիս են։ Գետը բաւականին բարձրացել է։ Բազարումս աժանութիւն է։ Գործը առհասարակ սակաւ է։ Վաճառականները չը նայելով քեսատութեան, այնուամենայնիւ, միմեանց դէմ ինտրիգաներ են լարում։ Միմեանց վնասում են, պակասացնելով ապրանքների գինը արժողութիւնից էլ աւելի։

—

„Кавказъ“ լրագիրը լսել է, որ սեպտեմբերի վերջին սպասվում է Թիֆլիսում լուսաւորութեան մինիստրութեան ուսումնական մասնաժողովի նախագահ Ա. Ն. Դեօրգիեվսկին, Կովկասեան ուսումնարանական շրջանը քննութեան առնելու նպատակով։

—

Նոյն լրագիրը լսել է, որ Անդրկասպեան երկրում՝ Ասխաբադ քաղաքում մտադրութիւն կայ արական պրօգիմնազիա բանալ։

—

«Դրօեբա» լրագրի ասելով, Դիղոմ գիւղի մօտ, Թիֆլիսի գաւառում, մօրեխ է յայտնուել, որին ոչնչացնելու համար միջոցներ են ձեռք առնուած։

—

ԳՐՕԴՆՕ քաղաքի հրդեհի մասին լրագիրները տեղեկութիւններ են հաղորդում, որ այրուած են 700 շինութիւններ. հազարաւոր մարդիկ մնացել են բաց օդի տակ, շատերը տեղաւորուած են զօրանոցներում, օգնական տրվում է երկու փունտ հաց իւրաքանչիւր հոգուն. ընդհանուր վնա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՀՄԵԴԻ ԿԵԱՆՔԸ

Վաշինգտոն Իրվինգ

Ժ.

Աբու-Ջահլի եղբօրորդին, Օմար-իբն-ալ-Խաթթէբ, իւր հօրեղբօր վրէժն առնելու համար կամենում է սպանել Մահմեդին։—Նրա հրաշալի դարձը։—Մահմեդ թաքչում է Աբու-Թալեբի դղեակում։—Աբու-Սուֆիան, թշնամի Կորէյշների գլուխ կանգնելով, հալածում է Մահմեդին և նրա հետևողներին։—Վճիռ է հանուում որ ոչ ոք իրաւունք չունենայ հաղորդակցելու Մահմեդի հետ։—Մահմեդ թողնում է իւր թաքստեան տեղն և քարոզութիւն է անում ուխտագնացութեան սուրբ ամսին։—Հաբիբ իմաստունի դարձը։

Համզայից ընդունած այն դառն պատժից յետոյ, Աբու-Ջահլի ատելութիւնը Մահմեդի դէմ աւելի ևս սաստկանում է։ Նա ունէր Օմար-իբն-Հաբէթ անունով մի եղբօրորդի, որ քսան վեց տարեկան մի քաջ, շատ ուժեղ և վիթխարի երիտասարդ էր։ Արիասիրտ մարդիկն անգամ սարսափում էին նրա վայրագ աչքերից, և նրա գաւազանը, որ միշտ բռնում էր ման գալիս, աւելի էր երկիւղ ազդում հանդիպողներին, քան թէ սուրը մի ուրիշի ձեռքում։ Այդպէս է նկարագրում նրան Աբու-Աբդալլահ-Մահմեդ իբն-Օմար-Ալվաքիդի արաբացի պատմաբանը. և զինուորի քաջագործութիւնները կարծել են տալիս, որ պատմաբանի խօսքերը սուտ չեն։

Աբու-Ջահլից գրգռուած, այդ ամեհի արաբը վճռում է գտնել Մահմեդին, որ դեռ Օրհամի մօտ էր բնակւում, և մխել իւր սուսերը նրա սրտի մէջ։ Կորէյշներին մեղադրում էին, որ նրանք իբր թէ հարիւր ուղտ և հազար ունց ոսկի էին խոստացած նրան այդ եղեռնական գործի համար, բայց սուտ է, քանզի աւելորդ էր կաշառել Աբու-Ջահլի վրէժխնդիր եղբօրորդուն։

Արդէն Օրհամի տունը գնալիս՝ նա հանդիպում է մի Կորէյշի և յայտնում է նրան իւր դիտաւորութիւնը. Կորէյշը Իսլամի ծածուկ աշակերտը լինելով աշխատում է յետ պահել նրան այդ չար գործից։ «Մահմեդին սպանելուց և նրա ընկերների վրէժը քո վերայ դարձնելուց», ասում է նա. „լաւ չէր լինել արդեօք, որ իմանայիր—չը լինի թէ ձեր տան մէջ էլ մի աղանդաւոր գտնուի“։—«Ո՞վ կարող է փոխած լինել իւր հաւատը իմ տան մարդիկներից»—հարցնում է Օմար շուարելով։ «Ո՞վ», պատասխանում է Կորէյշը, «Ամինա քոյրդ և Սէիդ փեսադ»։

Օմար շտապում է գնալ քրոջ մօտ և հենց ներս է մտնում թէ չէ, տեսնում է նրան ամուսնի հետ կորան կարդալիս։ Սէիդ կամենում է թաքցնել ծրարը, բայց նրա շփոթութիւնից Օմար գուշակում է բարկութեամբ, որ մեղադրանքը ճշմարիտ էր։ Զարաշար չարանալով, նա ապտակում է Սէիդին և ոտքը լանջքին դրած՝ քիչ է մնում, որ մխէր սուրը նրա կուրծքի մէջ, եթէ քոյրը չ'արգելէր։ Բայց սա էլ մի սաստիկ ապտակ ստանալով, արիւն է թորում երեսից։ «Ոսոխդ Ալլահի», գոչում է Ամինան, «ինչու ես հարկանում ինձ. միթէ նրա համար որ միակ ճշմարիտ Աստուծոյ եմ հաւատում։ Ոչ քեզնից եմ վախենում, ոչ քո մոլեգնութիւնից, ոչ էլ ուղիղ հաւատս պիտի ուրանամ։ Այո, աւելացնում է նա ոգևորուելով, չը կայ Աստուած բացի Աստուծոյ, և Մահմեդ նրա մարգարէն է։—Այժմ, Օմար, աւարտիր գործդ»։

Օմար կանգ է առնում, գղջի է գալիս և վերցնում է ծունկը Սէիդի լանջից։

„Բեր ինձ ծրարը“, ասում է նա։ Բայց Ամինան թոյլ չէ տալիս նրան կպչել սուրբ ծրարին, մինչև որ ձեռքերը չը լուանայ։ Պատմում են, թէ Օմարի կարդացած տեղն էր Կորանի տասնեւերորդ գլուխը, որ այսպէս էր սկսվում.

«Անունով ամենազօրին Աստուծոյ։ Մարդկային ազգին թշուառութիւն հասցնելու համար չէր, որ առաքեցինք նրան կորանը. այլ այն միջոցով առաքեցինք, որ նա, երբեմն վարժապետ ուսուցանէ մարդիկներին հաւատալու միակ Աստուծոյ, որ Արարիչն է երկրի և վերամբարձ երկնի։

«Ամենազօրն Աստուած բազմում է բարձունքի վերայ. Նրա իշխանութեան տակ է ամենայն ինչ որ կայ վերնային երկնքում, դաշտային երկրի վերայ և ստորնային աշխարհներում։

«Բարձր ձայնով կարդում ես աղօթքդ, բայց իմացիր որ այդ աւելորդ է։ Սրտիդ բոլոր, այո և ամենածածուկ գաղտնիքն անգամ յայտնի են Աստուծոյ։

«Արդարև Ես եմ Աստուած, և չը կայ Աստուած բացի ինձնից։ Ինձ պաշտիր և մի պաշտիր ուրիշին. ինձնից զատ ոչ ոքի մի վերուղղիր աղօթքդ»։

Կորանի խօսքերը թափանցում են Օմարի սրտի մէջ. նա շարունակում է կարդալ և կարդալ. ընթերցման ազդեցութիւնը քանի գնում զօրանում է նրա վերայ, և երբ որ հասնում է յարութեան և վերջին ահեղ դատաստանի նկարագրին, էլ փոխում է իւր հաւատը։

Այնուհետև նա գնում է Օրհամի տունը, բայց ուրիշ սրտով. հեզութեամբ բախում է դուռն և հրաման է խնդրում ներս մտնելու. „Մտիր, որդիդ Ալ-Հաթէբի, գոչում է Մահմեդ. ինչու ես եկել“։

«Եկել եմ գրելու անունս Աստուծոյ և նրա մարգարէին հաւատացողների դասի մէջ»—և այս ասելով կրկնում է Իսլամական հաւատի հանգանակը։

Եւ չէ հանգստանում, մինչև որ իւր դարձը յայտնի չանէր բոլոր քաղաքին։ Զիջանելով նրա խնդրին, Մահմեդ իսկոյն տանում է նրան Քիաբէ իսլամի ծէսերը հանդիսաբար կատարելու համար։ Որպէս զի ոչ ոք չը համարձակի մի վրկանք հասցնել մարգարէին՝ Օմար գնում է նրա ձախ կողմից, իսկ Համզան աջից, և բազմաթիւ աշակերտներ ուղեկցում են նրան։ Ի զարմանս համայն քաղաքի՝ նրանք ցերեկուայ լուսով ազատ անցնում են փողոցների միջից. եօթն անգամ պտտում են Քիաբէի շուրջն և ամեն ծէսերն մի առ մի կատարելով, եօթն անգամ համբոյր են տալիս սև սուրբ քարին։ Նկնողիւ նայում էին այդ թափօրի վերայ Կորէյշները. բայց չէին յանդգնում ոչ մօտենալ, ոչ էլ անարգել Մահմեդին, որոնց պաշտպանում էին Համզայի և Օմարի այդ երկու ահեղ պահապանների աչքերից, որոնք վառվում էին, ասում են, ինչպէս կորիւններից զրկուած առիւծի աչքեր։

սը հասցնում են 10,000,000 ֆ.

—

„Новости" լրագրի ասելով Սպանիայում խոլերայի յայտնուելու պատճառով, Սև ծով մտնող շոգենաւերը ռուսական ափերում խիստ քննութեան կենթարկուին։

—

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ պ. Թադէոս Դիլբարեանցի օգնութեամբ Ջէյթունի Հրկիզելոց օգտին հանգանակած փողը և չորս րուբլին ուղարկում ենք Ձեր տնօրինութեան. Նուիրատուների անուններն են. Յովհաննէս Ռուստամեան 1 ր., Николай Глазковъ 1 р., Խլխաթ Աստուածատուրեան 1 ր., Սարգիս Ղազարոսեանց 1 ր., Պօղոսանչեան 1 ր., Աւետիք Խաչիկեան 3 ր., Գրիգոր Խաչիկեան 1 ր., մի ոմն 1 ր., Մաթէոսեան 1 ր., Арнепулья յոյն 40 կ. Иванъ Михаиличъ ռուս 1 ր., Միքայէլ Խամաջայեան 1 ր., Միքայէլ Ռուստամեան 1 ր., Притасовъ ռուս 1 ր., ավ. Մարգարիտ Խալաթեանց 1 ր., Շամամ Օջաղեան 1 ր., Եփրեմ Այվազեան 1 ր., Քերովբէ Ջերեջեան 1 ր., Մաղաքիա Իզաեան 1 ր., Յովհաննէս Տաճկոյեան 1 ր., Մի ոմն 50 կ. Յովհաննէս Թարօյեան 50 կ., Իսահակ Աբրահամեան 50 կ., Գէորգ Սարգսեան 40 կ., Մելքոն Մէլքեզեան 50 կ.

—

Ելևմտից մինիստրութեան մէջ ներկայ ժամանակում քննվում են զանազան հարցեր, որոնք վերաբերվում են Անդրկովկասեան մաքսային վերահսկողութեանը և Բաթումի ազատ նաւահանգստին. («Моск. Вѣд.»)

ՏԷՐ-ՇՄԱՒՈՆԵԱՆԻ, ԱՆՏՕՆ ՍՕԼՕՄՕՆԵԱՆ ՂՕՐՂԱՆԵԱՆԻ, ՍԵՄԵՆՈՎԻ ԵՒ ՏԻԿԻՆ Ս. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑԻ ԳՈՐԾԸ, ՈՐՈՎ ԴՐԱՆՔ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԿԵՂԾ ՊԱՐՏԱՎՃԱՐՄԱՆ ԹՂԹԵՐ ՅՕՐԻՆԵԼՈՒ ՄԷՋ. *)

Վկայ Մովսէս Հովհաննիսեանց պրոկուրորի հարցին կեղծ պարտաթղթերի մասին նա ոչինչ չը գիտէ։ Սեմենովին ճանաչում է որովհետև նա յաճախում էր քաղցրաւենիների իւր խանութը սուրճ խմելու. Մի անգամ նա մտաւ իւր խանութը և պատմեց, թէ ինչպէս Սոֆիայի համար բերեցին վկայագիրներ, որոնք գտնուել էին Տ.-Շմ. մօտ. Դրան վկան պատասխանեց, որ Տ.-Շմ. մօտ չէին կարող լինել այդպիսի վկայագիրներ, որովհետև Տ.-Մկրտչեանները նրան այդ բաները չէին յանձնել, մինչդեռ իրենք մտիկ բաշելմանը չունէին. Սիմէօնեանը վկային ասաց, որ գտնուեցան ինչ որ թղթեր և սկսուեցաւ դատ. նա այդ գիտէ, որովհետև հրաւիրուած էր թարգմանի պաշտօնով Ղօրղանեանի և Տ.-Շմ. խօսակցութեան ժամանակ, վերջինիս ռուսերէն չը գիտենալու պատճառով։ Մկրտիչ Տ.-Մկրտչ. խնդրեց վկայից համոզել Տ.-Շմ., որ նա խոստովանի իւր յանցանքը՝ Ղօրղանեանի և Սոֆիայի թելադրութեամբ կեղծ պարտաթղթերի յօրինելու մէջ, և խոստացաւ ազատել նրան կալանաւորութիւնից՝ երաշխաւորութեան միջոցով։ 1882 թ. ընթացքում Տ.-Մկրտչ. շարունակ խնդրում էր վկայից խօսակցել Տ.-Շմ. հետ, որ նա խոստովանի իւր յանցանքը և գործի մէջ խառնի Ղօրղանեանին և միւսներին։ Քննիչի թոյլտուութեամբ վկան իրաւունք ստացաւ բանտը մտնելու և մեղադրուածին տեսնելու, որին սկսեց համոզել, բայց մեղադրուածը պատասխանեց. „ես պահվում եմ գաղտնարանում, ինձ տանջում են և այս դրութեան մէջ ես ոչինչ չեմ կարող ասել". Այս խօսքերը յայտարարուեցան քննիչին, որը ասաց. „Թող խոստովանի, և ես նրան կ՚ազատեմ երաշխաւորութեան միջոցով". Վկան այս բանը յայտնեց Տ.-Մկրտչ. և քննիչը վերջինիս համաձայնութեամբ Տ.-Շմ. ազատեց երաշխաւորութեան միջոցով։ Երաշխաւորեց զատ. քննիչը. սա Խօջամիրեանն էր՝ որին Տ.-Մկրտչ. փող տուեց, որ նրան հարկաւոր էր լեռնային վարչութիւնից վկայականներ դուրս բերելու այն մասին, թէ ինքը (Խօջամիրեանը) հանքեր ունէր։ Տ.-Մկրտչ. պահանջում էր, որ Տ.-Շմ. ասէ միայն երկու խօսք. որ վկայագիրները կեղծ են և յօրինուած են իրենց Ղօրղանեանի և Սոֆիայի յանձնարարութեամբ. յետոյ Տ.-Մկրտչ. տուեց Տ.-Շմ. 50 ր.։ Երբ որ Տ.-Շմ. բերուեցաւ քննիչի մօտ, վերջինս վկայի, ինչպէս միջնորդի խօսքերով կազմեց արձանագրութիւն; և ոչինչ հարցուփորձ չարեց Տ.-Շմ.-ին, այլ միայն ասեց նրան, որ ստորագրի։ Քննիչը հարց ու փորձ չարեց Տ.-Շմ., որովհետև նրան յայտնի էր դրա գալու նպատակը։ Դրանից յետոյ քննիչը իսկոյն արձակեց Տ.-Շմ.-ին։

Յետոյ վկան ցոյց տուեց հետևեալը. քննիչը հարց ու փորձ արեց, իւրեն միջոցով, ինչպէս թարգմանչի, Տ.-Շմ. և նա խոստովանուեց։ Սիմէօնեանը պահանջուեցաւ Երևանից, որին Տ.-Մկրտչ. ասաց. «յանձնարարուած նամակների բովանդակութեան համեմատ ես քեզ կը մեղադրեմ և բանտ կ՚ուղարկեմ, եթէ դու չես կատարի իմ պահանջմունքը»։ Սիմէօնեանը խոստովանուեց և խնդրեց վկային իւր խոստովանութեան վկայ լինել. Այն հարցին, թէ «Տ.-Մկրտչեանը Սիմէօնեանին փող տուեց», վկան պատասխանեց. „Ի հարկէ ոչ առանց դրան. Տ.-Շմ. մասնաւոր խօսակցութեան ժամանակ վկայի հետ, չէ պատմել խարդախութիւնների մասին".

Քաղաքացիական պահանջի հաւատարմատար Ստեփանովը նկատում է, քննիչը վկային չորս անգամ հարց ու փորձ արեց և թէ վկայի ներկայ ցուցմունքը կէտ առ կէտ համաձայնում է նրա առաջուայ ցուցմունքներին։ Այդ պատճառով նա խնդրում էր դատարանից կարդալ վկայի առաջուայ ցուցմունքները և առաջարկել վկային բացատրել այս հակասութիւնները։

Երդ. հաւատ. Մելիքեան և Քալանթարեան Տ.-Շմ. հարցնելիս, վկան պատասխանելով, ցոյց տուեց, որ Տ.-Շմ. նա սկսեց այցելել բանտում 1883 թ. յունվարին։ Քննիչին իւր ծառայութիւնները առաջարկեց Մկրտիչ Տ.-Մկրտչ. առաջարկութեամբ, որը յայտնեց վկային, որ քննիչին նրա մասին արդէն ասել էր։ Տ.-Շմ. բանտարկութեան սկզբում պահվում էր ընդհանուր արգելանոցում, իսկ յետոյ նրան փոխադրեցին գաղտնարանը։ Վկան պնդում է, որ Տ.-Մկրտչ. յանձնարարեց իրեն համոզելու Տ.-Շմ. որ նա մատնէ Ղօրղանեանին և Սոֆիային։ Ամեն անգամ մեղադրուածին բանտում այցելելուց յետոյ, վկան գնում էր Տ.-Մկրտչ. մօտ և բոլորը պատմում էր նրան։ Մեղադրուածի երաշխաւորութեամբ ազատուելու ժամանակ, վկան Տ.-Մկրտչ. յանձնարարութեամբ տուեց Տ.-Շմ. 50 ր.։ Քննիչի մօտ վկային հարց ու փորձելու ժամանակ պրօկուրորը մի անգամ ներկայ գտնուեցաւ, վկան չը գիտէ, բայց յիշում է, որ նրան կանչում էին Իլիա Սախիմանովիչ։ Տ. Շմ. արգելանոցում պահվում էր յունվարի 20-ից յետոյ։ Ինչպէս վկան յիշում է, նրան բերեցին քննիչի մօտ երեկոյեան խոստովանելու համար. երաշխաւորը առաջուց պատրաստ էր, և Տ.-Շմ-եանը, խոստովանելուն պէս, իսկոյն ազատուեցաւ։ Տ.-Շմ. ազատ էր մինչև յունիս ամիսը, և յետոյ նորից կալանաւորուեցաւ, բայց թէ ինչու, վկան չը գիտէ։ Վկան Սամսոն Թադէոսեանցին ճանաչում է, որը այն ժամանակ խոստովանուեց, երբ Տ.-Մկրտչ. փողեր ստացաւ. այդ փողերը, ամսական 60 ր., վկայի ձեռքով յանձնվում էին Թադէոսեանին։ Վկայի միջոցովն էին կատարվում, նոյնպէս վարձատրութեան բանակցութիւնները, որոնց վերջանալուց յետոյ Թադէոսեանը ասաց վկային. «ես արդէն ստացայ 25 ր., իսկ մնացածը պէտք է ստանամ քո միջոցով. Ագուլիսում Թադէոսեանից Տ.-Մկրտչ. ծեծուելու մասին, վկային տուեց ինքը Տ.-Մկրտչ. և յետոյ Թադէոսեանը, որը պնդեց թէ իրեն խաբելու համար ծեծեց։

Երդ. հաւատ. Օդոլովը և Շէխովցևը խնդրում են դատարանից քննել Տ.-Շմ. երաշխաւորութեամբ ազատելու մասին քննիչի կարգադրութիւնը և երաշխաւորի ստորագրութիւնները, համոզուելու այն բանում, որ մեղադրուածը ազատուեցաւ նոյն իսկ այն օրը, երբ կայացաւ քննիչի կարգադրութիւնը, և նոյնպէս երկրորդ անգամ խնդրում են կարդալ քննիչին տուած Տ.-Շմ. այն խնդիրը, որի մէջ նա մանրամասն նկարագրում է գործի հանգամանքները։

Պրոկուրորը հաստատում է, որ իրաւ է Տ.-Շմ. ազատուեցաւ երաշխաւորութեամբ նոյն իսկ այն օրը, երբ կայացաւ քննիչի կարգադրութիւնը։ Դրանով նա աւելորդ է համարում դրա մասին որև է քննութիւնը։ Իսկ ինչ կը վերաբերի Տ.-Շմ. խնդրի ընթերցման, նա բոլորովին օրէնքի հակառակ է համարում։

Մեղադրուած Ղօրղանեանը խնդրում է թոյլտուութիւն և վկային առաջարկում է հարցեր, որոնց նա պատասխանում է հետևեալը. Ղօրղանեանին անձամբ չէր ճանաչում և սրա տանը չէր լինում։ Այն ժամանակ, երբ նա խօսակցում էր Տ.-Շմ. հետ Ղօրղանեանին և Սոֆիային մատնելու համար Տ.-Շմ. ասում էր նրան, որ այս բոլոր պատմութիւնը—Ղօրղանեանի գործն է, և եթէ նրան չի յաջողուի մեղադրել Ղօրղանեանին ուրեմն ամեն ինչ կորած է։ 1882 թ. վկան ուղարկեց Ենակոլոփեանին Ղօրղանեանի մօտ, իրեն կողմից, բայց ոչ Տ.-Մկրտչ. խորհրդով,—որպէս զի Ղօրղանեանը հաշտուի Տ.-Մկրտ. հետ։ Վկան Ենակոլոփեանին ուղարկեց նրա մօրեղբօր՝ Բէժանբէգեանի միջոցով, որը ասաց վկային, որ նրա քրոջ որդին լաւ յարաբերութիւնների մէջն է դէպի Ղօրղանեանը։ Ինքը՝ վկան չէ ճանաչում Ենակոլոփեանին։

Քաղաքացիական պահանջի հաւատարմատարը յայտնում է դատարանին, որ նա միանում է պրօկուրորի այն կարծիքի հետ, որ Տ.-Շմ. խնդրի ընթերցումը օրէնքի հակառակ է ճանաչւում.

Դատարանը խորհրդածելուց յետոյ որոշում է կարդալ քննիչին տուած վկայի ցուցմունքները և գանգատաւորի հետ կանդիման կանգնեցնել նրան, իսկ խնդրի ընթերցումը մերժել։

Մկրտիչ Տ.-Մկրտչ. կանդիման կանգնելով խոստովանուեց, որ վկան եկաւ իրեն մօտ միայն մէկ անգամ և հաղորդեց, որ Թադէոսեանը կամենում է խոստովանուել, իսկ Տ.-Շմ. արդէն խոստովանուեց քննիչի մօտ։ Վկայի մօտ նա ուրիշ յարաբերութիւններ չունէր և նրան փող չէր տալիս։

Վկան իւր կողմից հաստատում էր, որ Տ.-Մկրտչ. իրեն միջոցով տուեց Տ.-Շմ. 50 ր., Թադէոսեանի ռոճիկը և Ասլանեանցին 5 ր.։ Տ.-Մկրտչ. յանձնարարութեամբ Ասլանեանցին փող տալու մասին վկան ունէ իրեն մօտ Տէր-Մկրտչ. ինքնագիր տոմսակը։

Տ.-Մկրտչ. պատասխանեց, որ վկան եկաւ նրա մօտ երկու ամիս առաջ և փող խնդրեց, յետոյ ուղարկեց իրեն մօտ Յովհաննէսեանի քաղցրաւենիների խանութում ծառայող Հաճինազարեանին.—

Երդ. հաւատ. Շէխովցևը գանգատաւորին հարցեր է առաջարկում Հովհաննիսեանի պարտամուրհակի մասին, որը նա գնեց Մովսէսեանից։ Տ.-Մկրտչ. պատասխանեց, որ պարտամուրհակը նա չէ գնել, և թէ այժմ գտնվում է Մովսէսեանի գրասենեակում։ Այդ առթիւ վկան ասում է, որ իւր պարտամուրհակը Մովսէսեանից գնուած է 1883 թ. յունվարի 9 ին և այժմս գտնվում է գանգատաւորի մօտ։ Շէխովցևը խնդրում է դատարանից, ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վերայ, որ պարտամուրհակը գնուած է Տ.-Մկրտչ. միջոցով յունվարի 9-ին, իսկ վկան տուեց իւր ցուցմունքները քննիչին յունվարի 8-ին։

Քաղաքացիական պահանջի հաւատարմատարը խնդրում է դատարանից ամբողջ կազմութեամբ գնալ Մովսէսեանի գրասենեակը համոզուելու, որ այժմս էլ անդ է գտնվում պարտամուրհակը։

Նախագահը նիստը ընդհատուած

---

*) Տես № 95-ում.

Միւս օր միշտ անվեհեր և կտրուկ Օմարն, Կորէյշներին յայտնապէս քամահելով, մենակ գնում է Քեաբէ աղօթելու իբրև իսլամական։ Մի ուրիշ հաւատացող էլ եկած է լինում այնտեղ, բայց նրան թոյլ չեն տալիս աղօթելու և վռնդում են թուք ու մուրով. իսկ Օմարին ոչ ոք չէ յանդգնում զրկելու, պատճառ նա Աբու-Ջահլի եղբօրորդին էր։ Այնուհետև նա գնում է հօրեղբօր մօտ։ „Հրաժարվում եմ քո պաշտպանութիւնից, ասում է նրան, և չեմ կամենում աւելի ապահով վիճակ ունենալ քան թէ իմ հաւատակիցները"։ Այն րոպէից սկսեալ նրա և մարգարէի միւս աշակերտների վիճակը մի է լինում. Օմար դառնում է Մահմեդի ամենաքաջ նեցուկը։

Այդպէս կատարուեցաւ Իսլամի ամենամեծ նահատակի հրաշալի դարձը։ Կորէյշներն այն աստիճանի վրդովեցան Մահմեդի այդ նոր յաղթանակից, որ նրա Աբու-Թալէբ հօրեղբայրը սկսաւ երկիւղ կրել, որ մի գուցէ դաւով կամ բացարձակ բռնութեամբ սպանէին Մահմեդին. ուստի սա լաւ համարեց ականջ դնել ազգականի վճռողական խորհրդին և գլխաւոր աշակերտների հետ միասին մեկնեցաւ Աբու-Թալէբի բերդը, քաղաքից ոչ հեռու։

Աբու-Թալէբի կողմից, որ Հաշէմեան ազգապետն էր, և նոյն տոհմի միւս անդամներից Մահմեդին վիճակուած հովանաւորութիւնը, թէպէտ նրանք համախոհ էլ չէին ըստ կրօնի, միանգամայն վառեց նրանց դէմ Կորէյշների ատելութիւնը և առիթ տուաւ ցեղի բաժանման։ Հակառակորդ դասի առաջնորդն Աբու-Սուֆիան, Մահմեդի ազգականը պատճառ բերելով, կասկածելի և նախատելի համարեց ոչ թէ միայն նրա քարոզն ընդունող ազգականներին, այլև բոլոր Հաշէմեան տոհմը, որ արենակցութեան զգացմամբ տէրութիւն էր անում նրան, չը նայելով որ նրանք միաբան չէին հաւատի մէջ։ Յայտնի է, որ Աբու-Սուֆեանի թշնամութեան աղբիւրն ոչ լոկ անձնական ոխն էր, ոչ էլ կրօնական եռանդը, այլ տոհմային վէճ—խնդրութիւնը։ Նա սաստիկ փափագում էր իւր տոհմին հասցնել՝ այնքան ժամանակ Հաշէմեանների ձեռքում գտնուող գերագահութիւնը քաղաքի վերայ։ [illegible] Աբու-Թալէբի վարմունքը, որով նա ազատել և պատսպարել էր Մահմեդին իւր դղեակի մէջ, առիթ էր տալիս Աբու-Սուֆեանին և սրա մտերիմներին դատապարտելու թշնամիների բոլոր տոհմը. Նրանց վճռով Կորէյշներից ոչ ոք իրաւունք չի պիտի ունենար այնուհետև ամուսնանալու և կամ որև է առևտրական գործ տեսնելու Հաշէմեան ցեղի հետ, մինչև որ դրանք մահուան չը մատնէին Մահմեդին։ Այդ յորոշումը սահմանուեցաւ մարգարէի առաքելութեան եօթներորդ թուականին և մագաղաթի վերայ գրուելով Քեաբէի մէջ կախուեցաւ։ Ամենավատ նեղութեան մէջ ընկան այժմ Մահմեդ և նրա աշակերտները. պատահում էր մինչև անգամ, որ նրանք սով էին կրում ամրոցի մէջ, ուր որ թագնուած էին։ Կորէյշեանք իրենց վճիռը խստիւ գործ դնելու և օգնութեան դուռը փակելու համար՝ երբեմն պաշարում էին ամրոցը։

Մինչ այս մինչ այն և ահա հասաւ տարեկան ուխտի ժամանակը, երբ որ բարեպաշտ արաբացիք իրենց երկրի ամեն կողմերից գունդագունդ գալիս էին Մեկկա. հալածուած Իսլամականների վիճակը փոքր ինչ լաւացաւ։ Այդ սրբազան ամսում արաբական հին սովորութեամբ ամեն տեսակ թշնամութիւն գադարում էր և կռուող ազգերն առ ժամանակ հաշտուելով Մեկկա էին գումարվում։ Ուստի Մահմեդ էլ իւր աշակերտների հետ դուրս եկան թաքստից և Մեկկա վերադարձան։ Նա մտնում էր ուխտաւորների բազմութեան մէջ, աղօթում էր, քարոզում էր տարածում էր իւր ուսմունքն և պատմում էր յայտնութիւնքը։ Այս կերպով նա շատ մարդկիկ գրաւեց, և նոր աշակերտները, տուն վերադառնալով, հեռաւոր երկիրներ տարան նորայայտ վարդապետութեան սերմերը։ Նորադարձների թւում երբեմն գտնվում էին և իշխաններ, կամ տոհմապետներ, որոնց օրինակն ամբողջ ցեղի վրայ էլ ազդում էր։ Այդպիսի իշխաններից մէկի հաւատափոխութեան մասին մի գեղապաճոյճ և անհաւատալի վէպ է թողած արաբական աւանդութիւնը, և որովհետև այդ վէպի մէջ յիշուած են Մահմեդի գլխաւոր հրաշքներից մի քանիսն, վասնորոյ աւելորդ չի լինիլ յառաջ բերել նրան այս տեղ, գէթ համառօտիւ։

Հաբիբ-իբն-Մալէք անուն մի իշխան կար՝ շատ հանճարեղ և իմաստուն։ Ասում են, նա շատ հմուտ էր մոգութեան և զանազան գիտութեանց. ամեն կրօնները հիմնովին հետազօտած, ամեն կրօնական գիրք ուշի ուշով կարդացած և փորձով էլ ամեն հաւատ ճանաչած մի մարդ էր, քանզի իւր կեանքում նա եղած էր և հրեայ, և քրիստոնեայ և մոգ։ Այդչափ փորձ և այդչափ գիտութիւն մթերելու համար նա արդարև ուրիշ մարդկիկներից էլ աւելի ժամանակ էր ունեցած, հարիւր քառասուն տարի ապրած լինելով, ինչպէս որ պատմում է աւանդութիւնը։ Այժմ նա եկած էր լինում Մեկկա աղօթելու իւր նորահասակ դստեր՝ Սաթէհի համար, որ համրացել, խուլացել, կուրացել էր և ոչ մի անգամ չէր շարժում։

Աբու-Սուֆեան և Աբու-Ջահլ [illegible], կարծում են, թէ այնքան իշխանի գալուստը, որ այնքան զօրեղ էր և իմաստուն, այնչափ մեծ զօրքի առաջնորդ էր և ընդ նմին ցեղերանդ կապակցող, շատ յարմար առիթ կտար նրանց կործանելու Մահմեդին։ Այս մտքով նրանք պատմում են իմաստուն ծերունուն սուտ մարգարէի աղանդն և յորդորում են նրան կանչել Մահմեդին իւր բանակը՝ քաքքարուա հովտի վերայ, և պատուիրել նրան պաշտպանելու իւր ուսմունքը, վստահ լինելով թէ մարգարէի կամակորութիւնը մոլորութեան մէջ պատճառ կը տար կամ նրա աքսորման և կամ մահուան։

Պատմութիւնը պայծառ գոյներով նկարագրում է, թէ ինչ չքեղ սպառազինութեամբ էին գնում հետևակ և ձիաւոր կռապաշտ Կորէյշներն Աբու-Սուֆեանի և Աբու-Ջահլի առաջնորդութեան ներքև՝ ներկայ գտնուելու մեծահանդէս քննութեանը քաքքարուա հովտում, և թէ ինչ արևելեան յատարարեց մինչև երեկոյեան ժամի ը։

(Կը շարունակուի)

ՏԵՂԵԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒ, 26 մայիսի.—Քառասուն օր րանից առաջ Բագուն մշտահար Հոգին յանձնեց իւր սիրելի Թադէոս աւագ-քահանային։ Հանգուցեալը իւր ազգեցիկ բարեմասնութեամբ և քրիստոնէավայել առաքինութեամբ ոչ սակաւ նուիրական յիշատակ թողեց իւր յետնորդների համար։ Գանձակայ գաւառի տասն և չորս հայ գիւղօրէից մէջ կատարուած հոգեհանգիստները հանգուցեալի համար, պարզ ապացոյց է, թէ նա որքան սիրած է եղել հայ եկեղեցին և անզուգ նախանձախնդիր հանդիսացած նրա բարեզարդութեանը։ Հանգուցեալի շնորհիւ յիշեալ 14 հայ գիւղօրայքը զանազան ժամանակներում ստացած են բաւականաչափ եկեղեցական անօթներ, զարդեր, զգեստներ և այլն։

Արդէն «Նոր-Դար»-ի № 69-ի մէջ հրատարակուեցաւ հանգուցեալի համառօտ կենսագրութիւնը։ Գ. բժ. Աբրամեանը ըստ արժանւոյն գնահատած է ընթերցող հասարակութեանը այդ մասին, ուստի մենք աւելորդ ենք համարում մանրամասնութեանց մէջ մտնելը։ Բայց որովհետև, քառասուն օրից յետոյ՝ այսօր ամբողջ հոգեւորական դասը ՝խուռն բազմութեան ներկայութեամբ կրկին անգամ պատել էր նրա գերեզմանի շուրջը, մենք հրաւիրում ենք հասարակութեան ուշքը այն կէտերի վերայ, որ թաղման ժամանակ այնքան երախտագէտ սրտով յայտնեց իւր սիրած քահանային։ Այսօրուայ այդ հանդէսը հանգուցեալի քառասնօրեայ թաղման հոգեհանգստեան հանդէսն է, որ Մարդասիրական Ընկերութեան 21 տարեդարձի առթիւ, սուրբ պատարագից յետոյ, Օգոստափառ Աղէքսանդր III Կայսրի կենաց համար գոհաբանական մաղթանք կատարուեցաւ։ Արժ. Խորէն քահանայ Միրզաբեգեանցը նախապէս իւր քարոզի մէջ յայտնեց ժողովրդեան, որ հանգուցեալի եղբայրքը՝ փոխանակ կրկին անգամ ժողովրդին հոգեհացի հրաւիրելու, տեղւոյս Աղքատասիրաց ընկերութեան գործադիր անդամներին երկու հարիւր րուբլի (200 ր) են յանձնել, որ վերջինները քաղաքիս մէջ գտնուած յայտնի աղքատներին բաժանեն։ Բուդաղեանց եղբայրների այդ օրինակ արարքը գովելի է։

Հանգուցեալի թաղման օրը, Ապրիլի 14-ին, Բագուն իւր ծաղկեայ պսակների, մրմունջների և ցաւակցական արտասուքների հետ, դագաղի վերայ, եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր խոստումն արաւ մի համեստ գումար ժողովել, յանձնել Մարդ. Ընկերութեան, որ սա յիշեալ գումարի տոկոսով բարձրագոյն դպրանոցներից մէկի մէջ տնօրինէ մէկ կամ երկու որդեգիր ունենալու Տէր Թադէոսի անուամբ։ Դրա առթիւ հայր Խորէնը իւր օրուայ դամբանական քարոզի մէջ, որքան միտներս է, յայտնեց և պատրաստի ստորագրութեան թերթն էլ [illegible] յանձնելով Ընկերութեան նախագահ պ. Խ. Անտոնեանցին, քաջալերեց ժողովրդեան վաղ ընդ փոյթ ձեռնարկելու այդ մեծ գործը։ Հետևանաց մասին որքան տեղեկացանք, մինչև օրս հազար րուբլի չափ ստորագրուած է, յետ այնմ դադարած։ Զգիտենք—ինչու։ Մեծ յոյս ունինք, որ մի այդ չափ էլ կը գումարուի և կը գործադրուի անյապաղ նուիրական նպատակին։ Մի հասարակութիւն, որ միշտ սիրով վերաբերուած է ամեն մի բարենպատակ գործի, մի՞թէ այս հանգամանքում այնքան եռանդով սկսած գործը պակասութեան է հասցնելու։ Ցանկութիւնը, կամքը կատարել է պահանջում, այն էլ այնքան [illegible] կերպով յայտնուած։

«Հանգիստ ոսկերացդ» մրմունջները կարդալուց յետոյ՝ ժողովուրդը հոգևորական դասի առաջնորդութեամբ դիմեց Մարդասիրական Ընկերութեան Դահլիճը, „Էջմիածինն 'ի հօրէ" հոգեբուղխ շարականը առաջնորդում էր գնացքին։ Դահլիճում 'ի Տէր հանգեալ Աղէքսանդր II-դ Կայսեր հոգւոյ համար հոգեհանգիստ կատարուեցաւ, որոյ ամենաողորմած հաճութեամբ հաստատուած է Ընկերութիւնը, որ 21 տարի շարունակաբար իւր «մարդասէր» դրօշակի տակ յօգուտ եկեղեցւոյ և հասարակական կրթութեան ծառայելով՝ այսօր իւր գոյութեան քսան և մէկերորդ տարեդարձն էր կատարում։ Կարդացուեցան Ճառեր։ Հանգիստից յետոյ ժողովրդականք հրաւիրվեցան աշակերտուհեաց ձեռագործները տեսնելու, որոնցից գնահատութեամբ ծախելով 150 րուբլի փող գումարուեցաւ։ Այսպէս հետզհետէ ժողովուրդը ցրուեց տխուր տպաւորութեան տակ։ Այս անգամ աշակերտներ և աշակերտուհիներ չկային, որոնք, ըստ սովորականին, իրենց քաղցր երգերով և ներկայութեամբ գրաւէին հասարակութեան ուշքը։

* * *

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արտասահմանեան լրագիրները, անգլիական նոր մինիստրութեան կազմութեան սպասելով, մէկ կողմից քննում են Գլադստոնի մինիստրութեան անկման պատճառները, միւս կողմից—քննադատում են, թէ ինչ ազդեցութիւն կարող է ունենալ այս անակնկալ հարուածը պետութիւնների յարաբերութիւնների վերայ։ Գլադստոնի պարտութեան պատճառների վերաբերութեամբ լրագիրների մեծ մասը այն կարծիքն ունի, որ Գլադստոնի կառավարութիւնը ինքն ցանկանում էր պարտութիւն և ինքն սարքեց այդ պարտութիւնը. իսկ ինչ կը վերաբերի նրան, թէ ինչ ազդեցութիւն կարող է գործել Անգլիայի կառավարութեան փոփոխումն արտաքին քաղաքականութեան ընդհանուր ընթացքի վերայ, լրագիրները զանազան կարծիքներ են յայտնում։ Այսպէս, օրինակի համար, Վիէննայի «Neue Freie Presse» ենթադրում է, որ մինիստրական նոր փոփոխութիւնը եւրոպական խաղաղութեան վտանգ է սպառնում եգիպտական հարցի կողմից։ Գլադստոնը, ասում է լրագիրը, ընդունեց եւրոպական պետութիւնների իրաւունքը Եգիպտոսի գործերում միջամտելու. իսկ պահպանողականները կը պնդեն, որ այս գործերը բացառապէս Անգլիային են հետաքրքրում։ Հայեացքների այդպիսի տարբերութիւնը առիթ կը տայ դիւանագիտական վիճաբանութիւններին։ Աֆղանական հարցում կարող է նմանապէս դժուարութիւններ առաջ գալ, եթէ որ չեն հետևել նրանք նախկին կաբինետի քաղաքականութեան և կը կամենան ի կատար ածել իրենց ընտրողներին իրենց տուած խոստումները»։ Համարեայ թէ միևնոյն կարծիքն է յայտնում „Kreuz. Zeitung"։ Նրա կարծիքով, եթէ լորդ Սալիսբերին կը հասկացնէ, որ տօրիական մինիստրութեան կառավարութեան անցնելով, կը վերադառնան Բիկոնսֆիլդի ժամանակները, այն ժամանակ նրան կը մնայ խզել իւր բարի յարաբերութիւնները ոչ միայն Պետերբուրգի հետ, այլ և Ֆրանսիական կառավարութեան հետ, և այդպէս մինչև Անգլիայի կատարեալ չեզոքութեան ձգտել։ Այդպէս չէ մտածում «Frankfurt. Zeitung» լրագիրը. այս լրագիրը համոզուած է, որ անգլիական մինիստրական ճգնաժամը չի կարող էական ազդեցութիւն ունենալ տարաշխարհիկ քաղաքականութեան վերայ, և ուստի տագնապները այս բանում շատ անհիմն են։ «Լորդ Բիկոնսֆիլդը—ասում է լրագիրը—կառավարութեան ղեկը ձեռքն առնելով, չը դուրս եկաւ Ռուսիայի դէմ, թէև այդ միջոցին Խիւան նուաճուեցաւ"։ Լրագիրը յոյս ունի, որ այս իմաստուն օրինակին կը հետևի և Սալիսբերին։ Այս ոգւով են զրուցում և պահպանողական անգլիական թերթերը, ինչպէս օրինակ, «Morning Post»։

—

Մադրիդից „Temps" լրագրին տեղեկացնում են, որ ուսումնական յանձնաժողովը բժիշկ Ֆերրանի հետ միասին գնաց Ալբերիկ, ուր 160 մարդ հիւանդացած է խոլերայով։ Տարափոխիկ ցաւի արծարծելու սկզբում Ֆերրանը պատուաստեց խոլերային թոյնը 342 մարդուն, որոնցից երեքը խոլերայով հիւանդացան, և միայն մէկը մահուան դիպուածով վերջացաւ։

—

Բերլինից մի դիւանագէտ անձն «Pall-Mall-Gazette» լրագրում գրում է այն գաղտնի շարժառիթների մասին, որոնք առաջնորդեցին Գլադստոնի կաբինետին հրաժարական տալու։ Բերլինում խօսում են, որ լորդ Րօզբերրին գնաց Բերլին իմանալու թէ ինչ պայմաններով կարելի կը լինի հաշտուել իշխան Բիսմարկի հետ. այս միևնոյն ժամանակ Չամբերլէնը ուղարկուեցաւ Փարիզ իմանալու թէ ինչ պայմաններով կարելի կը լինի դաշնադրութիւն կայացնել Ֆրանսիայի և Անգլիայի մէջ, այլ և նրան յանձնուած էր նախազգուշացնել Ֆրէյսինէին, որ եթէ Ֆրանսիայի պահանջները շատ մեծ կը լինին, այն ժամանակ նա գործ կունենայ Սալիսբերիի հետ։ Բերլինում լորդ Րօզբերրին պատասխանեցին, որ Գլադստոնի մինիստրութեան միջոցին խօսք անգամ կարող չի լինել համաձայնութեան մասին. Փարիզում Չէմբերլէնին իմաց տուին, որ միայն այն ժամանակ կարող է դաշնադրութիւն կայանալ, երբ Ֆրանսիան միևնոյն իրաւունքները կը ստանայ, ինչ իրաւունքներ որ ունի Անգլիան Եգիպտոսի վերայ։ Այս պատասխաններից յետոյ Գլադստոնի կաբինետին ուրիշ ոչինչ չէր մնում, բայց միայն ինքն իրեն համար ստեղծել պարտութիւն և հեռանալ ասպարիզից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ինքնօրինակ դիպուած (ուսումնական վէճ)։ —Անգլիայի Յակոբ I թագաւորի մօտ եկաւ երբեմն Սպանիայի դեսպան, Դոն-Ալվարեց դէ-Վեգաս, մի շատ ուսումնական մարդ, որ մտածում էր մի այնպիսի մնջկատակութեան լեզու ստեղծել, որի միջոցով աշխարհիս ուսումնականները կարողանային արտասանել իրենց ամենախորին մտածութիւնները։

Ճաշի ժամանակ նա Անգլիայի թագաւորին հարցրեց, թէ չկա՞յ արդեօք Անգլիայում այնպիսի մի մարդ, որ այս առարկայով պարապելիս լինէր։ Թագաւորը չը կամենալով վայր ձգել իւր երկրի պատիւը, յայտնեց, առանց երկար մտածելու, որ մի այդպիսի մարդ կայ։

—Ո՞րտեղ է ապրում նա,—հարցրեց սպանիացին։

—Գլազգովում, համալսարանումն է ծառայում,—պատասխանեց թագաւորը, որը շատ մեծ կարծիք ունէր Գլազգովի վերայ և կարծում էր որ այնտեղ անպատճառ մի այդպիսի ուսումնական կը գտնուի։

Սպանիացի դեսպանը ասաց իւր մնաս բարեաւը Անգլիայի թագաւորին և գնաց Գլազգով, բայց սրանից առաջ այնտեղ ուղարկուեցաւ շտապով արքայական սուրհանդակը, որը պատմեց եղելութեան մասին։ Ալվարեցը հասնելով Գլազգով, հենց առաջին անգամ իւր քայլերը ուղղեց դէպի Գլազգովի համալսարանը, որտեղ և հարցրեց մնջկատակութեան լեզուի երևելի պրոֆեսորի մասին։ Նրան պատասխանեցին որ պրոֆեսորը ուր որ

պերճութեամբ հիւրընկալաւ Նրանց իմաստունն Հարիբ իւր ծիրանեգոյն վրանի մէջ մի հոյակապ գահոյքի վերայ բազմած, որ զարդարուած էր փղոսկրով, սանդալով և ոսկով։

Մահմեդ Բաղիշցի մօտ է լինում, երբ որ կանչում են նրան մտնելու այդ ահեղ դատաստանին։ Վրդովուած ամուսինը սարսափ է յայտնում բարձր ձայնով, իսկ աղջիկները վայ ու լալով հող գլխին են ընկնում, տեսեն թէ նա անդառնալի մահուան հանդէպ պիտի գնար. բայց հայրը քաղցրութեամբ սիրտ է տալիս նրանց, խնդրում է յոյսերն Աստուծոյ վերայ դնելու։

Աբու-Սուֆեան և Աբու-Ջահլ թշնամիների փառահեղ պճնութեան ներհակ՝ Մահմեդ գալիս է քննութեան տեղը մի պարզուկ ճերմակ զգեստով, գլխին հագած մի սև չալմա և վրան ունելով մի Աղէնեան բրդէ թիկնոց, որ պատկանած էր դեռ իւր Աբդ-ալ-Մոթալէբ պապին։ Ոլորուն գանգուրներն ուսերի վերայ էին ընկնում, մարմնից շողում էր մարգարէութեան խորհրդաւոր մի լոյս, և թէպէտ նա բնաւ չէր օծում իւր մօրուքն և անոյշ նիւթեր չէր գործածում, բացի մուշկից և քափուրից, սակայն և այնպէս, երբ նա յառաջ է գալիս, մի անուշ հոտ է բուրվում ամեն տեղ։ Արաբական մատենագիրները վկայում են, թէ յատկապէս Նրա մարմնի միջից է ծագում եղել այդ անոյշ բուրմունքը։

Նրա առջևից գալիս է Աբու-Բէկր կարմիր բաճկոնով, սպիտակ չալմայով, վերարկուի փէշերն էլ թևի վրայ ձգած, որպէս զի կարմիր հողաթափները լաւ երևէին.

Անմռունչ երկիւղ է տիրում մարդաշատ ժողովին, երբ որ մտնում է մարգարէն, ոչ ձայն է լսվում, ոչ շշունջ. և անասուններն անգամ լռում են խորհրդապէս. ձիերի վրնջիւնը, ուղտերի կանչիւնը, էշերի զռնչիւնը դադարում է, և հանդարտում է ամեն բան։

Պատկառելի Հարիբ ծերունին ընդունում է նրան սիրելապէս և հէնց առաջին հարցմամբ բուն խնդրին դիպչելով, „լսած եմ, ասում է, որ դու մարգարէ և Աստուծոյ առաքեալ ես անուանում քեզ։ Ստոյգ է արդեօք»։

«Ստո՛յգ է, պատասխանում է Մահմեդ, ես առաքուած եմ Ալլահից՝ քարոզելու ճշմարիտ հաւատը"։

«Բարի՛ է, ասում է խորիմաստ ծերունին,—բայց իւրաքանչիւր մարգարէ նշաններով և հրաշքներով էր հաստատում իւր առաքելութիւնը։ Նոյ ունէր մի ծիածան, Սողոմոն՝ մի խորհրդաւոր մատանի, Աբրահամ՝ հնոցի հուր, որ սառում էր ըստ Նրա հրամանի, Իսահակ՝ մի խոյ, որ եկաւ նրա փոխարէն զոհուելու, Մովսէս՝ մի հրաշագործ գաւազան, իսկ Յիսուս միայն խօսքով կեանք էր տալիս մեռեալներին և սաստում ալիքներին։ Արդ, եթէ իրօք մարգարէ ես, արի դու էլ մի հրաշք գործիր մեզ"։

Սարսուռ է ընկնում այդ պահանջից Մահմեդի հետևողների վրայ։ Աբու-Ջահլ ծափ ծափ է տալիս խնդութիւնից և գովասանում է Հարիբ իմաստունի հանճարը։ Բայց մարգարէն զսպում է նրան քամահրաբար գոչելով, թէ «լռի՛ր դու, շո՛ւն, որ նախատինք ես տանդ, տոհմիդ և ամբողջ ազգիդ», և ապա հանգիստ կատարում է Հարիբի կամքը։

Մահմեդից պահանջուած առաջին հրաշքն այս էր, որ ասէ, թէ ինչ կար Հարիբի վրանի մէջ, և ինչու էր Մէկկա բերուած։

Մահմեդ խոնարհում է գլուխն և սկսում է զանազան նշաններ գծագրել աւազի վրայ, յետոյ ասում է շտկուելով. „Ո՛վ Հարիբ. դու բերել ես այս տեղ Սաթիհ աղջկանդ, որ խուլ է, կաղ է, կոյր է,—նրա համար երկնքից բժշկութիւն ստանալու յուսով. Դէ՛հ, մտիր ուրեմն վրանիդ մէջ, խօսիր նրա հետ, լսիր պատասխաններն և իմացիր, որ Ալլահ ամենազօր է»։

Ալևոր իշխանը շտապելով վրան է մտնում. Նրան հանդէպ առողջ առողջ դուրս է վազում բաղկատարած դրստրիկը՝ աչքերը խնդալից, զուարթ դէմքով, լուսնից պայծառ երեսով։

Երկրորդ հրաշքն աւելի դժուար է լինում։ Հարիբ պահանջում է, որ Մահմեդ մի գիշերնական խաւարով ծածկէ երկինքը կէսօրին և հրաման տայ լուսնին երկնքից իջնելու և Քեաբէի գլխին կանգնելու։

Մարգարէն այդ հրաշքն էլ առաջինի պէս դիւրաւ կատարում է։ Նրա հրամանով տարընթեան լուսի տեղ՝ մութ է տիրում աշխարհին. լուսինը շեղվում է իւր ընթացքից և մոլորվում է երկնքում. բայց մարգարէի անդիմադրելի զօրութիւնն երկնքից վայր է քարշում նրան և կանգնեցնում է Քեաբէի վերայ։ Յետոյ լուսինը եօթն անգամ պտոյտ է գալիս տաճարի շուրջը, երկրպագում է Մահմեդին՝ իբրև մարգարէի, և նրան խաղաղութեան ողջոյն տալով մնում է կանգնած նրա առջև զերթ մի հրեղէն եբերան սուսեր,

Այդ բանն էլ հերիք չհամարելով, շարունակում է վէպը,—Մահմեդ պատուիրում է հնազանդ լուսատուին՝ մտնել իւր վերարկուի աջ թևանոցն և դուրս գալ ահեկից. ապա թէ երկու մասն բաժանուիլ, մէկին գնալ արևելք, միւսին արևմուտք, և վերջապէս երկնքի միջնավայրում իրար հանդիպելով՝ դարձեալ կազմել մի բոլորակ, լուսափայլ գունտ.

Յիշել ևս պէտք չէ, որ այդ հրաշքներից յետոյ Հարիբ իմաստունը համոզվում և ընդունում է նոր հաւատը չորս՝ հարիւր եօթանասուն Մէկկացիների հետ։ Բայց Աբու-Ջահլ առաւել ևս խստանում է իւր անհաւատութեան մէջ, աղաղակելով, թէ այդ հրաշքները Մահմեդի թովչութեամբ յառաջ բերուած լոկ տեսիլներ էին, և ոչ այլ ինչ *)։

(Կը շարունակուի)

---

*) Այդ հրաշքները յիշատակուած չեն Ճշգրտասէր Աբուլ-Ֆիդի պատմութեան մէջ, և իսլամական բնիկ հեղինակներից ոչ ոք մի բան չէ ասում դրանց մասին. այլ դրանք մնացել են աւանդութեան մէջ և մանրակրկիտ ամբողջութեամբ գրուած են անվաւեր մատեաններում։—Պէտք է միշտ 'ի նկատի առնել, որ Մահմեդ միայն մի հրաշք էր քարոզում, այն է՝ կօրանը։ Իրվինգ։

գնացել է։

—Ոչինչ, ես կը սպասեմ թէկուզ մի քանի տարի, մինչև որ կարողանամ նրան տեսնել,—պատասխանեց Դոն-Ալվարեցը։

Նոյն ժամանակ համալսարանական ժողովը գլուխ էր կոտրում թէ ինչպէս պրծնել գիտնականի ձեռքից և, վերջապէս, մի խրատարան մտադրեց մի ինչ որ մսավաճառ Նիլսոնին, որը ապրում էր քաղաքում և գիտէր ամեն հարցին պատասխան տալ։ Մարդ ուղարկեցին Նիլսոնի մօտ և խնդրեցին, որ պրոֆեսորի դեր ընդունէ իւր վերայ։ Միւս օրը ժամի 11-ին առաւօտեան համալսարանական դահլիճում կայացաւ վիճաբանութիւն։ Ալվարեց մտաւ դահլիճը և ձեռքերը խաչաձև դնելով կրծքին ողջոյն տուեց։ Նիլսոնը միևնոյնը արեց։ Սպանիացին մի մատը վեր բարձրացրեց, Նիլսոնը սպառնալից դէմքով բարձրացրեց երկուսը։ Ալվարեցը բարձրացրեց երեք մատը։ Նիլսոնը նրան բռունցքը ցոյց տուեց։ Դեսպանը սրտաշարժ է լինում և գրպանից փորթոգալ է հանում. Այս տեսնելով, Նիլսոնը անհամբեր ձեռքը գրպանն է դնում և հանում է սև հացի մի կտոր։ Սպանիացին ողջոյն է տալիս, մսավաճառը նոյնպէս և միմեանցից բաժանվում։ Դոն-Ալվարեցը վերադառնալով դէպի անհամբերութեամբ նրան սպասող պրոֆեսորները յայտնում է, որ պրոֆեսոր Նիլսոնը ամէն համալսարանի զարդ կարող է համարուել։

—Ես բարձրացրի մատս, որ ցոյց տամ, թէ կայ մի Աստուած, ի հարկէ, պատասխանեց նա, բայց նա ունի և որդի։ Ես նրան ցոյց տուի երեք մատս, ակնարկելով Աստուածութեան երեք անձանց վերայ, Նիլսոնը ցոյց տուեց բռունցքը, այսինքն, որ թէև նրանք երեք անձն են, բայց այնուամենայնիւ Աստուածը մէկ է։ Ապա մենք խօսեցինք բնութեան հրաշալիների մասին։ Ես նրան փորթոգալ ցոյց տուեցի, իսկ նա պատասխանեց, որ բնութեան բոլոր հրաշալիները ոչինչ են ճշմարիտ հացի հետ, այն է կրօնի հետ համեմատած։ Երբոր գոհ սպանիացին հեռացաւ, կանչեցին մսավաճառին։—Դէհ, ծօ, ինչպէս հաւանեցիր սպանիացուն, հարցրեց ռեկտորը։

—Այո, կոպիտ մարդ է, փողոցումը լինէր, ես նրան կ՚ծեծէի։ Ես ինչպէս չ՚ծեծէի, ցոյց տուաւ նա ինձ մի մատ, որպէս թէ ես մի աչք ունիմ. Ես երկուսս եմ բարձրացնում,—ասում եմ որ իմ մէկը նրա երկուսին արժէ. իսկ նա երեքն է ցոյց տալիս, այսինքն, որ մենք երկուսս, այնուամենայնիւ, երեք աչք ունինք։ Կատաղած, ես նրան բռունցքս ցոյց տուեցի, և միայն այն ժամանակ դադարեց ինձ վերայ ծիծաղելու։ Յետոյ նա սկսեց պարծենալ իւր փորթոգալով, իսկ ես նրան ցոյց տուեցի, որ հացը աւելի լաւ է ինձ համար։—Այսպէս վերջացաւ երևելի մնջկատակութեան դիսպուտը։

⁂

Իշխան Բիսմարկի 70 ամեայ ծննդեան օրուայ տարեդարձի առթիւ—ինչպէս յայտնի է, ստորագրութեամբ բաւականին մեծ գումար ժողովեցին կանցլերին մի ազգային ընծայ տալու։ Գումարի մի մասը գործ դրուեցաւ Բիսմարկի ժառանգական մի ագարակ գնելու Շենհաուզէն անունով, մնացած փողը տրուեցաւ Բիսմարկին բարեգործական նպատակների համար։ Սկզբում Բիսմարկը կամենում էր իրենց տուած փողի վերջին մասովը մի հիւանդանոց կամ աղքատանոց հիմնել, բայց յետոյ իւր ուշադրութիւնը մի ուրիշ բանի վերայ դարձրեց։ „Nordd. Allg. Zeit.» լրագրի տեղեկութիւններին նայելով, Իշխան Բիսմարկը ուշադրութիւն դարձրեց ուսուցիչների վերայ։ Աչքի առաջ ունենալով այն որ վերջին ժամանակ ուսանողներով լցուեցաւ համալսարանի լեզուագիտական ճիւղը, Իշխան Բիսմարկը այն կարծիքի է, որ պէտք չէ ամսաթոշակ նշանակելով գրաւել էլ աւելի շատ ուսանողներ։ Ուստի նա վճռեց ամսաթոշակ նշանակել այն ուսանողներին, որոնք աւարտելով համալսարանական իրենց ուսման ընթացքը, դեռ պարապ են։ Բացի սորանից Իշխանը վճռեց մի մասը տալ այն ուսուցիչներին, որոնք կարիք ունին իրենց զաւակներին կրթելու։ Այս հարցերի մասին կանցլերը դիմեց խնդրով գերմանական վարչութիւններին իրենց կարծիքը յայտնելու օժանդակութեան նպատակին յարմար կամ անյարմար լինելու մասին։ Բոլոր վարչութիւնները հաւանեցին կանցլերի մտադրութիւնը, միայն մէկը կարծիք յայտնեց, որ ոչ միայն այն ուսանողներին տալ, որոնք ուսուցչութեամբ պիտի պարապեն, այլ և այն ուսանողներին, որոնք ուսուցչական նշանաւոր արժանաւորութիւններ ունին։ Մի քանի վարչութիւններն էլ կարծում են, որ թոշակները պիտի տրուեն ոչ թէ ուսանողների նիւթական վիճակը ապահովացնելու համար, այլ բացառապէս մասնագիտութեան մէջ կատարելագործուելու համար։ Այս նպատակով պիտի նշանաւոր միջոցներ նշանակուին ուսանողների ճանապարհորդութիւններին համար Անգլիա, Ֆրանսիա կամ Իտալիա, և նշանաւոր ուսումնական հիմնարկութիւնների յայտնի պրոֆեսորների դասախօսութեանց հետ ծանօթանալու համար։

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Երևան. պ. Ա. Ս.-ին.—Մեզ ուղարկուած թերթի իբրև կէս տարուայ բաժանորդագին ուղարկել էք մեզ 5 ր.։ Պէտք է յայտնենք Ձեզ, որ կէս տարուայ բաժանորդագինը 6 ր. է և թէ կէս տարով բաժանորդ գրուողը պէտք է բաժանորդ գրուելիս յայտնէ այդ. միակողմանի պայմանները փոփոխել կարելի չէ։

—

Մոզդոկ. պ. Յ. Բ.-ին։—Յունիսի 1-ից ձեզ ուղարկվում են թերթի համարները, և 5 ր. փոխարէն կը ստանաք չորս ամիս շարունակ թերթը, այսինքն մինչև հոկտ. 1-ը, ուստի 25 կ. մնում է ձեզ հասանելիք։ Իսկ եթէ կը կամենաք մինչև առաջիկայ յունվարը ստանալ, պէտք է 1 ր. 50 կ. էլ ուղարկէք։

—

Վաղարշապատ. պ. Ջ.-ին.—Թիֆլիս խմբագրին ս. Էջմիածնում գտնուած ժամանակ ցաւում էք, որ չէք կարողացել տեսնել և բերանացի յայտնել շնորհակալութեան այն զգացմունքները ինչ որ այժմս նամակով էք յայտնում։ Շնորհակալութիւն. Այն օրերն էլ ինքը խմբագիրն էլ ժամանակ չը պիտի ունենար բարեկամական այցելութիւններ ընդունելու և վերադարձնելու, բայց ոչինչ, Աստուածով օծմանը կարող էք նրան տեսնել Ս. Էջմիածնում, եթէ գործերը չը արգելեն նրան։ «Դոն-Պետրօ Կաստելացի» վէպը ստացանք. եթէ յարմար գտնուի և տեղ լինի կը հրատարակենք։ Բայց ցաւում ենք, որ թերթի մէջ տպագրուածը արտատպել տալը, թէ կուզ ձեր ծախքով, խմբագրութիւնը յանձն չի առնիլ, ըստ որում դրա հետ կապուած են շատ և շատ նեղութիւններ, որոնք յայտնի չեն գործից հեռու կանգնածին։ Արդէն լրագրի նեղ սիւնակները չեն թոյլ տալիս շարուածքի անփոփոխ արտատպելը։

—

Երևան. Մարուկին.—Դուք լռել էք, որովհետև տեսնում էք, որ մենք լռութիւն ենք պահպանում և այդ հանգամանքը այդպէս շատերին անհանգստացրել է և մի քանիսին էլ թերահաւատ դարձրել... Ձեր լռութիւնը այս օրերս կը խանգարուի և մունջ լեզուն կը սկսի խօսել։ Հին հեքիաթներից գիտէք անշուշտ, որ մունջ մարդկանց լեզուն յանկարծ բացվում է սարսափելի վտանգի առաջ կամ անչափ ուրախալի լուրից։ Ուրախ լուր է, որ մենք պէտք է ձեզ հաղորդենք։

—

Խոնաշեն. պ. Բ. Մ.-ին.—Դուք ի հարկէ կարդացել էք „Русс. Кур."-ի № 132-ում Պօլսի թղթակցութիւնը։ Դուք ցանկացած էք իմանալ, թէ ով է այդ թղթակիցը։ Իմացէք—Արփիար Արփիարեան։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

11 յունիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրատարակուեցաւ պետական խորհրդի Բարձրագոյն հրամանով հաստատուած կարծիքը, որով կը բարձրանան եւրոպական առևտրականութեան մաքսատան տարիֆի մաքսերը. սրան համաձայն լրացուցիչ մաքս է նշանակվում 20 կ. ոսկով, եւրոպական և ասիական առևտրականութեան ապրանքների մաքսերի իւրաքանչիւր ռուբլուց։ Այն բացառութիւնների վերայ, որոնք յիշուած են գործակալութեան մարտի 31-ի հեռագրում, պէտք է աւելացնել տարիֆի յօդուածներին, որոնց մտադրութիւն կայ 10% մաքսի ենթարկելու, 99 յօդ. կ. 1., այս տարիֆի այն յօդուածների վերաբերութեամբ, որոնք մնում են ներկայ հիման վերայ—յօդ. 26 կ. 35, յօդ. 26 կ. 5 և 35 տեղ և 73 յօդուածի տեղ ուղղել 73-ից մինչև 78 և աւելացնել յօդ. 89 կ. 2, 99, 92, 94, 95, 97, 98, 102, 103 կ. Նմանապէս յօդ. 130։ Ծանօթ. Լրացուցիչ հարկ կը վերցնուի այն ապրանքներից, որոնք հարկի չեն լինել ենթարկուած մինչև յուլիսի 1-ը։ Տարիֆի պատշաճաւոր յօդուածների բոլոր փոփոխութիւն որոշուած է՝ փայտեղէն և ուրիշ ամեն տեսակ թղթէնիւթ ենթարկուելու է 20 կոպ. մաքսի ոսկով իւրաքանչիւր փութից. զտած շաքարը (ռաֆինադ), որ բերվում է Անդրկովկասի Սև ծովի նաւահանգիստները ենթարկուելու է մաքսի 3 ր. 30 կ., բայխովեան (байховый чай), սև, ծաղկաւոր և դեղին թէյերը, որոնք ներս են բերվում Չինաստանի սահմանից և Ամուր գետով Իրկուտսկ քաղաքի մաքսատան միջով—11 ր. փութից, հայելու այն տեսակ ապակիները, որոնք 801 քառակուսի վերշոկից աւելի են, բացի 12½ կ. մաքսից իւրաքանչիւր քառ. վերշոկի համար, ևս ¼ կոպ. մէկ վերշոկից իւրաքանչիւր լրացուցիչ 2000 քառակուսի վերշոկի համար։

Վոլինի փոխ-նահանգապետ Գրլինկա նշանակվում է Պօդօլի նահանգապետ։

Ֆինանսների մինիստրին իրաւունք է տրվում մաքսային հարկատուութեան փոփոխութիւններին համաձայն, համապատասխան փոփոխութիւններ անել մաքսային տարիֆում, թոյլ տալով, երբ հարկաւոր է, վերառնելիք մաքսային տուրքերի ամբողջութեան համար ըստ առանձին յօդուածների, մեծացնել կամ քչացնել նրանց, 5 կոպէկի սահմանում։

Հրատարակուեցան դատական պաշտօնատարների համար պետական խորհրդից հաստատուած էմերիտալ կանոնադրութիւնը (Эмеритальный уставъ), որ կը սկսուի գործ դնուել 1885 թ. յուլիսի 1-ից և պետական խորհրդի հետևեալ որոշումները. 1) Արգելվում է անչափահասների և կանանց գիշերային աշխատութիւնը զանազան գործարաններում, 2) Թոյլ է տրվում «Արխանգելսկ-Մուրմանեան ժամադրական նաւագնացութեան» ընկերութեանն հիմնել Սպիտակ ծովում և Սառուցեալ ովկիանոսում ժամադրական նաւագնացութիւններ 10 տարի ժամանակով և 3) Փոփոխութեան են ենթարկվում ոգեղէն խմիչքների առևտուրի կանոնադրութիւնը. կը կազմակերպուին խմիչքների գործերով պարապող գաւառական ատեանները ազնուականութեան պարագլուխների նախագահութեամբ և նահանգական ատեանները նահանգապետների նախագահութեամբ։ Այս կանոնները գործ կը դրուին 1886 թուից։

ԼՕՆԴՕՆ. «Standard» լրագիրը հաստատում է այն լուրը, որ իբրև պահպանողականների և ազատամիտների մէջ կայացել է համաձայնութիւն։ Գլադստոնը իրեն համար գործողութիւնների ազատութիւն է վերապահում պահպանողական կաբինետից ենթադրուած միջոցների վերաբերութեամբ, բայց խոստանում է առհասարակ պաշտպանել նրան մինչև ժողովների վերջը։ Պահպանողական լրագիրները մինչև անգամ նոր մինիստրների անուանացուցակի մասին են հաղորդում, որը, մի քանի բացառութիւններով, նման է մի փոքր առաջ հրատարակուածին։

12 յունիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւոր կայսրը բարեհաճեց նուիրել իւր սեփական գումարներից 25,000 ռուբլի յօգուտ Գրոդնոյի հրկիզելոց։

Վճռուած է գիւղական հողային բանկի պետական վկայաթղթերի լրացուցիչ հատանումն 10 միլլիոն ռուբլու չափ։

ԼՕՆԴՕՆ. Սալիսբերին յանձն առաւ կաբինետի կազմակերպութիւնը։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. Վերին Եգիպտոսից վերադարձող երեք անգլիական զօրագնդին հրամայուած է ժամանակաւորապէս մնալ Աղեքսանդրիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Երէկ առաւօտեան դրամափոխէքը։

7 յունիսի.

Լոնդօն	$24\,^{5}/_{15}$, $24\,^{13}/_{32}$ և $24\,^{5}/_{16}$
Համբուրգ	$206\,^{7}/_{8}$, 208 և $207\,^{1}/_{4}$
Փարիզ	256, $256\,^{1}/_{4}$ և 256
Պօլուիմպերիալ	8 ր. 12 կ. սակ.
Մաքս. կտրոններ (կուպոն)	8 » 14 » սակ.
Արծաթ	1 » 29 » »
Բորսային դիս.	6 և $6\,^{3}/_{4}$%
Պետակ. բանկի 5 տոմսեր.	
1-ին շրջանի	99 ր. — կ. գն.
2-րդ »	$97\,^{3}/_{4}$ ր. կ. սակ.
3-րդ »	$97\,^{1}/_{2}$ » գն.
4-րդ »	97 ր. 37 կ. »
5-րդ »	$97\,^{1}/_{2}$ ր. գն.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.	
1-ին շրջանի.	95 ր. 12 կ. սակ.
2-րդ »	95 ր. » »
3-րդ »	$95\,^{1}/_{4}$ ր. » սակ.
Տար. գում. 1-ին փոխ. 5% տոմսեր	225 ր. » գն.
» » 2-րդ	$210\,^{1}/_{4}$ ր. » սակ.
$5\,^{1}/_{2}$% ռենտեր	$102\,^{1}/_{2}$ » ,,
Ոսկէ ռենտը	169 ր. 87 կ. »
Նոր կոնսոլ փոխ.	144 ր. 12 կ. »

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։

Նոյեմբերի 1-ից կազմուած ցուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբաթուայ ընթացքում Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի մէջ։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, ժամի 4-ին երեկոյեան ուղիղ գծով Նովօրոսիսկ և Կերչ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան շրջանական գծով ամեն նաւահանգիստների վերայ։

ԿԻՐԱԿԻ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պօլիս։

ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ, Օդեսայից շրջանական գծով։

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրոսիսկ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պօլսից

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍ" ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթում պոստ. գնում է ժ. 8—35 րոպ. առ.
Բաթումից » գալիս է » 10—25 » գիշ.
Բագու . . . . գնում է » 10—55 » գիշ.
Բագուից » » գալիս է » 8 — » » ցեր.

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից ապր.—Ճանապ. գնաց. գնում է . . . . . . ժ. 3—15 » առ.
Սուրամից . . գալիս է » 8—24 » առ.

Վլադիկավկազեան պոստային

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ճանապարհին փոխելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկավկազ գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջ.

Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին. Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

Дозволено цензурою. Тифлисъ, 12-го Іюня 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр., д. № 12